Loennertz R. O. P. « *La Société des Frères Pérégrinants*», Roma, S. Sabina, 1937, Vol. I.

Դոմինիկեանց կարգին պատմութեան մեծ հաւաքածոյին, որ կը բովանդակէ եռամասն մատենաշար 1) Archivium Fratrum Praedicatorum, որ ցարդ 1931-1937 եօթը հատոր է, 2) Monumenta Ordinis Praedicatorum historica, հտ. Ա.-ԺԹ, և 3) Dissertationes Historicae, հտ. 1-8, վերջին մատենաշարիս եօթներորդ տետրին Ա. հատորը կը կազմէ արգոյ Հ. Լենների յիշեալ գործը, որ կը խօսի գործունէութեանը մասին Դոմինիկեան կարգի այն ճիւղին որ Եւրոպայէն դուրս Արեւելքի կողմերը քարոզչական առաքելութեամբ կը զբաղէր և կը կոչուէին Հեթանոսաց կողմերը պանդխտացող Եղբայրներ - Fratres peregrinantes inter gentes, և շուրջ 1335ին՝ Եղբայրակցութիւն կամ ընկերակցութիւն կ'անուանուէին, և ԺԵ-ԺԶ դարերուն վերջնականապէս կոչուեցան Միաբանութիւն, Congregatio peregrinantium. (էջ 11-21)։ Այս Արեւելեան ընկերութեան մասնաճիւղ մ'էին նաեւ Հայ Միաբանող Եղբայրները (Unitores), և հեղինակը կ'անդրադառնայ ասոնց մասին, ինչ որ պատմականօրէն մեզի ալ հետաքրքրական է։

Ծանօթ է թէ Եւրոպայի քրիստոնէութեան դէպ ի Արեւելք կամ Ս. Երկիր արշաւանքները մղում առին խորհրդապաշտ ու զովելի զգացումներ մէջ մը. առոր ապացոյց Պետրոս ճգնաւորի միամիտ ձեռնարկը։

Ուխտաւորներու և ասպետներու կողքին դէպի Արեւելք սկսան դիմել նաեւ Դոմինիկեան և Փրանցիսկեան կրօնաւորական կարգերու մասնաճիւղեր, և հեղինակը կը շեշտէ թէ ի սկզբան ընտիր միաբաններու մտքով՝ այս շարժումը կը ծագէր Աւետարանը քարոզելու ոգեւորութենէն, և Fr. Ricoldo de Monte Croce իր Itinerariumին[1] մէջ մինչեւ իսկ այդ աւետարանական անձնուրաց կեանքը կը համեմատէր Քրիստոսի երկնքէն երկիր ուղեւորութեան։

Գեղեցիկ տեսլական՝ որ զժբախտաբար իր վատասերումն ունեցաւ յաջորդներէն շատերուն մէջ, և ինչպէս կը գրէ անկողմնակալ հեղինակը, անկիցշրջիկ կեանքի ախորժակը, սեփականասիրութիւն, շահամոլութիւն՝ բոլորովին խաթարեցին հիմնադիրներուն ուղիղ դիտաւորութիւնը, և ի զուր ջանջումն իսկ փորձեցին անոնց՝ մաքրագործումի նպատակով։

Ներկայ հատորը չորս հատուած ունի. Ա.ը ընդհանուր ակնարկ յիշեալ ընկերութեան թափանցումին՝ Արեւելեան երկիրներուն մէջ, զուգընթաց յատկապէս Ճենովայի և Վենետկոյ հանրապետութեանց թափանցումին. նախ Ս. Երկիր, Կիպրոս, Սիւրիա, յետոյ Հռոմ կայսրութեան մէջ. ապա Խրիմ և Ղփչախներու կայսրութեան մէջ, հուսկ Պարսկ-Թաթար կայսրութենէն մինչեւ Թուրքեստան և Հնդկաստան։ 1330ին Դոմինիկեան այս քարոզիչ Եղբայրութիւնը իր պայծառութեան գագաթնակէտն է, ուսկից յանկարծ ինկաւ 1349ի ժանտախտէն և մնացին միայն Հայաստանի կայանները, որոնք միշտ տոկացին և ապաւէն եղան միւս բոլոր աշխարհներէն փախչող Եղբարց։

Ընկերութիւն Պանդխտացող Եղբարցը - Societas Fratrum Peregrinantium - 1603ին փոխեց անունը Congregatio Orientis - Արեւելեան Միաբանութիւն և վերջնականապէս Ընդհանուր Հաւատաստիւռ ժողովէն 1857ին։

Արեւելեան մասնաճիւղին մէջ կային՝ եւրոպացիներէ զատ՝ բնիկ հայեր և յոյներ։ Ընկերութիւնը կը ղեկավարուէր Ամենակալով մը՝ որ Թիւնս կը նստէր Դոմինիկեան մեծ կարգին Եւրոպա տեղապահն էր Դոմինիկեան մեծ կարգին Եւրոպա նստող ընդհանրական մեծաւորին։ Հայազգի Միաբանող Եղբարք այս ճիւղաւորման մէջ առանձին կարգ մը և մասնաճիւղ մը կը ձեւացնէին, գրեթէ ինքնավար, ինչպէս կ'ըսէ հեղինակը. և ասոնք եղան գլխաւոր դերակատարները արեւելքի բոլոր տարբերուն մէջ, մանաւանդ թէ ժամանակ մը իբրեւ միակ գործիչ տարբ հանդիսացան ոչ միայն հայկական գաղութներու, ինչպէս կը շեշտէ հեղինակը, այլ նաեւ Հռոմներու (38-88), Ղփչախներուն (89-134) և Պարսկահայաստանի մէջ (135-198)։

Բիւզանդական աշխարհի մէջ երբ Ճենովացիք 1267ին ազատ շահաստան մը ձեռք բերին, ի Բերա, և ինքնավար համայնք մը կազմեցին, հիմնուեցան լատինական առաջին վանք մը, և յաջորդաբար՝ ուրիշներ զուգընթաց Ճենովայի ազգեցութեանց, Քիոս, Մելիտինէ, Զմիւռնիա և այլ տեղեր՝ ուր յիշեալ քարոզիչ վանականները կը վարէին Առաջնորդի, Ամենակալի, Հաւատաքննիչի պաշտօնները, ինչպէս նաեւ եւրոպացի իշխանապետներու խոստովանահայր, և օտար դեսպանութեան պաշտօններ, ի վնաս կրօնաւորական կարգապահութեան՝ ինչպէս կ'ըսէ գրիչը։

Հռոմ աշխարհի մէջ եւրոպացի և յոյն միաբանակիցներու օժանդակ կարկառուն հայ դէմքեր չատ եղած են, կարեւոր դիրքեր ալ գրաւած։

Հեղինակը կը յիշէ Եղ. Անդրէաս Կաֆացի մը, որ 1389ին Ս. Պապէն Հաւատաքննիչ կ'անուանուի Հռոմ և Թաթար աշխարհներուն վրայ. Լուդովիկ Դաւրիժեցի մը՝ որ 1400ին Կ. Պոլսոյ Ս. Անտոն աղքատախնամին Տնօրէն - մատրանապետն է (59, 75) եւն։

Յիշեալ Դոմինիկեան վանքերը յատուկ ուսումնասիրութեան նիւթ ըլլին Յոյն եկեղեցական մատենագրութիւնը, միշտ չատագովական և միաբանական տեսակէտներով, և ոչ արհամարհելի հեղինակներ երեւան եկան, չատերը յոյն (77-88)։

Գրքին երրորդ հատուածը կը բովանդակէ Ղփչախներու թաթար կայսրութեան առաքելութիւնները՝ որ Սեւ ծովէն Վոլկա և մինչև մեծն Ասիա կը տարածուէին, միշտ Ճենովացւոց ազդեցութեան գծով։ Փրանկիսկեաններէն տասնեւմէկ տարի վերջ մտան Դոմինիկեաններն ալ, հինգ տարի վերջ մտան Դոմինիկեաններն ալ, նախ ծովափները, և կաֆա 1298ին։ Հոս վարդարանի Տիրամօր ուխտավայրը՝ մեծ կեդրոն, իր ծագումով հայ վանք է, ինչպէս կ'ըսէ, որ հայ վանականներու դէպ ի նոր քարոզիչներն պէս եղաւ Բռնայ վանքը Յովհ. Բռնեցիէն։

Վենետկեցիք և Ճենովացիք 1332ին Ազովի մէջ ուրիշ վանք մ'ալ հիմնեցին, ուր մինչեւ ԺԵ դար անպակաս եղան լատին եպիսկոպոսներ. իսկ 1315ին Տրապիզոն մտան՝ Ճենովայի հովանւոյն տակ (94-98)։

1307ին տեղի ունեցաւ այս վանականներու թափանցումը Խրիմէն Ղփչախներու կայսրութեան մէջ և մինչեւ Բէքին՝ որ եղաւ Մեսրաթեան մէջ և մինչեւ Բէքին՝ որ եղաւ Մեսրաթեան մէջ և մինչեւ Բէքին՝ պոլիտի աթոռը՝ նորահաստատ լատին եօթը վիճակներու. ասոնց վեցը մնացին Սեւ ծովի հիւսիսափը՝ քրիստոնեայ տարրի մէջ. և մինչ այս վիճակները կը գրաւեն փոխնիփոխ Եւրոպացի Փրանկիսկեանք և Դոմինիկեանք, Կաֆայի լատին վիճակաւորը յաճախ հայազգի Դոմինիկեան մ'է։

Հուսկ, գրքին Դ. մասը կը կազմէ Պարսկաստանի կամ լաւ եւս արեւելեան թաթար կայսրութեան Դոմինիկեան Առաքելութիւնը որ Իրանի, Մեծ Հայք, Նէն զատ կը բովանդակէր Վրաստան, Մեծ Հայք, Միջագետք։

Դ. դարուն սկիզբները կեդրոններն են՝ Դաւրէժ, Մարաղա, Սուլթանիէ, բայց ունեցած են Վանատուններ՝ Թիֆլիս, Սեբաստիա, Պաղատատ։

1318ին Յովհաննէս ԻԲ. Ս. Պապը փորձեց հիմնարկել լատին նուիրապետութիւն մ'ալ Թաթար կայսրութեան մէջ. Սուլթանիէ եղաւ Արքեպիսկոպոսական աթոռը, և եպիսկոպոսական գահեր՝ Դաւրէժ, Մարաղա, Տէքիքէրքան? եւն. ուրիշներ մնացին Զմիւռնիա, Սեբաստիա, Սեւուրիչներ մնացին Զմիւռնիա, Սեբաստիա, Սեւաստոբոլ. ապա հիմնուեցան Թիֆլիսի և Սմբրաստոբոլ. ապա հիմնուեցան Թիֆլիսի և Սմբրանտի վիճակները և հուսկ 1333-1356ի ատենները Նախիջեւանի լատին վիճակը, որ և մնաց իբրեւ տեւական կեդրոն։

Մինչ ուրիշ հոգերու վրայ Եւրոպական տարրով կը սնէր այս առաքելութիւնը և՝ դժուարաւ, հայոց քով ունիթոռական գաղափարը նոր փուլի մէջ մացուց Դոմինիկեան Արեւելեան Առաքելութիւնները։

Հեղինակը նախ կը ներկայացնէ այդ հիմնարկութեան պատմութիւնը (141-150). Յովհ. Քըռկութեան պատմութիւնը (141-150). Յովհ. Քըռկութեան այցը 1328ին ի Մարաղա առ Բարթողիմէոս Եպս. de Poggio, որ առաքուեցաւ Նոյն մէոս Եպս. de Poggio, որ առաքուեցաւ Նոյն ինքն իր վարդապետէն՝ համբաւեալ Եսայի Նշենքն իր վարդապետէն՝ համբաւեալ Եսայի Նշենքն, ինչպէս լաւ կը դիտէ Զամչեան։ Հոն Բարթիէն, ինչպէս լաւ կը դիտէ Զամչեան։ Հոն Բարթիէն, ինչպէս լաւ կը դիտէ Զամչեան։ Հոն Բարթողիմէոսի քով մնաց տարի մը, անկէ սորվեցաւ լատիներէնը և փոխադարձ սորվեցուց հայերէնը. միասին դարձան Բռնայ, գումարեցին վարդապետներ՝ միաբանական ժողովի համար՝ նախագահութեամբ Բարթողիմէոսի. մեծ յաջողութիւն գտաւ շատ վանքերու քով միաբանութիւնը, հուսկ Յովհաննէս՝ Բռնայ վանքն ընտրեցաւ Դոմինիկեան կարգին, և գլուխ հանեց ասոնց Դոմինիկեանացումը։

Թարգմանուեցան լատին աստուածաբանութեան, ծիսարանի գրքերը՝ նախ Բարթողիմէոսի նախագահութեամբ, որուն մահէն վերջ (1333) յաջորդեց Տփխիսի եպս.ը՝ Յովհ. Քլորենտացի, և կոչուեցաւ Յովհաննէս de Swinford և Պետրոս Արագոնացին և հայազգի Յակոբ Թարգմանը։ 1337ին արդէն Ս. Դոմինիկոսի կարգին ծէսը, և 1337-1344ի մէջեւ, հաւանօրէն երբ Քըռնեցին Աւինեոնէն դարձաւ, նորոգեցին կրօնաւորական ուխտերը Յ. Քլորենտացւոյն առջեւ և որդեգրեցին Դոմինիկեան կարգին կանոնները՝ բացի մշանջենաւոր պահեցողութենէ և բացարձակ աղքատութենէ, որոնց արտօնութիւնն ստացան ինոկենտիոս Զ.էն 1356ին՝ «Apostolicae Sedis» Սահմանադրութեամբ, և նոր Միաբանութիւնն ենթարկուեցաւ Դոմինիկեան Ընդհ. Մեծաւորին. որդեգրեցին Երկրորդ կարգի Եղբարց հանդերձը, և կոչուեցաւ Ordo Fratrum Unitorum S. Gregorii Illuminatoris - (կարգ Եղբարց Միաբանողաց Ս. Գրիգորի Լուսաւորչին), կամ Ordo S. Augustini dicti Unitores կամ Ordo Praedicatorum dicti Unitores - կարգ Ս. Օգոստինոսի

1. C. M. Laurent: «Peregrinationes Medii ævi quatuor», Leipzig, 1875, p. 105.

digitised by A.R.A.R.@

Միաբանողք կոչուած, կամ Կարգ Քարոզչաց միաբանող կոչուած. և այսպէս դուրս եկաւ Դոմինիկեան Կարգին Հայկական ճիւղաւորումը, որ սակայն Քոնեցւոյն մտքով պէտք է զանազանուէր պատուոյ ստորադասութեամբ Արեւմտեան երիցագոյն կարգէն՝ որուն անդամները հօր, հիմնադրի, վարդապետի հանգամանքն ունէին, և առանց Արեւմտեան Կարգի այս պատուաւորներուն ներկայութեան ոչ նոր բան մը պէտք էին ընել և ոչ ընդհանուր ժողով գումարել. մէն մի հայ վանքի մէջ ներկայացուցիչ ըլլալու էր անոնցմէ գէթ մէկ հոգի որ միաբաններուն վրայ գերագահ էր (142–146)։

Այսքան ստորադաս մտայնութիւնը սակայն բնականաբար յաջորդ դարերուն տեղի պիտի տար Հայ Միաբանողներու և իրենց Արեւմտեան երիցագոյն միաբանակիցներուն միջեւ անվերջ գժտութիւններու՝ որ վերջ գտան 1475ին, երբ Թուրքերը գրաւեցին Կաֆան. եւ երբ 1510ին, հայ ճիւղին տրուեցան իբր հայկական ուրոյն նահանգի իրաւունքները, ընտրելու իրենց Առաջնորդը՝ ընդհանրականին անմիջական փոխանորդի պաշտօնով (156)։

Հեղինակը գրքին վերջը կը խօսի նաեւ Կիլիկեան Հայաստանի մէջ Դոմինիկեանց թափանցումին, Հեթում Ա.էն վայելած համակրութեան ցումին, Հեթում Ա.էն վայելած համակրութեան եւն. ուր սակայն չկրցան ունենալ ոչ մէկ մնայուն կայան, թէև 1266ին և 1327ին որոշ էին, այլ միայն աւելի կամ պակաս բնակութիւն հաստատող միաբաններ, և Այասի մէջ լատիներէնի դպրոց մը։

Այս ընդհանուր պատկերը զոր հանգամանօրէն կը պարզէ յարգելի Հեղինակը, և ուր մինչ շատերը լատին նուիրապետութեան վիճակներէն ասուպի պէս անցան թաթարական հսկայ աշխարհէն, առանց հետքի, վասն զի չկար քրիստոնեայ տարրը, հայը մեծագոյն դերը կատարեց, կ'ըսէ, թէ՝ Խրիմու և թէ Պարսիկ–հայկական գօտիներու մէջ. և այս տարրին կը պարտի Ս. Դոմինիկոսի կարգը իր տեւականութիւնը Արեւելքի մէջ։

1343ին Հայ Միաբանող Ուխտը Խրիմու մէջ երեք վանք ունէր արդէն, Ս. Նիկողոս, Ս. Պետրոս–Պօղոս և Ս. Յակոբ. առաջինը մայր վանքն էր և ինքնավար, ազատ՝ պանդուխտ Եղբարց իշխանութենէն։ 1475ին՝ Թուրքերու մուտքին՝ վանականները Պոլիս անցան՝ Կաֆայի թողին վանականները Պոլիս անցան՝ Կաֆայի թողին Ս. Նիկողոս եկեղեցին։ Իսկ Հայաստանի մէջ 1348ին 15 կայաններ կը հաշուէին, ուր ապաւէն գտան 1343ին մեծ ժանտախտէն վերապրող Պարսկաստանի Եւրոպացի քարոզիչ եղբայրները։

Նոյն իսկ Դաւրէժի (152–160), Մարաղայի (160–165), Սուլթանիէի (165–172) պարսկական առաքելութիւնները և Թիֆլիսի ասպարէզը գրաւողները հայեր են. և ուր որ պակսեցաւ այս տարրը՝ Վրաստան, Թուրքեստան (Թիֆլիս, Սմբրզանտ), լատին նորահաստատ վիճակները խմբեցան, 1329ին անուանուած եպիսկոպոսները յաջորդութիւն չունեցան, հայերը գրաւեցին լատին վիճակները։ Մինչ Նախիջեւան յետնագոյն ժամանակով եպիսկոպոս մ'ունեցած էր, նախ Սուլթանիէի Արքեպիսկոպոսական վիճակին ենթակայ՝ շուտով արքեպիսկոպոսական աթոռ դարձաւ, որ ունէր իր Միաբանող վանքերը, կղերը և ժողովուրդը։ «Ոչ մէկ քրիստոնեայ ազգ, կը գրէ, լաւագոյն վերաբերում ցոյց տուաւ քարոզիչներուն՝ որքան հայերը» (189). Միաբանող Հայերը մինչեւ իսկ իւրացուցին Դոմինիկեան կարգին դպրոցական վէճերը, և 1333ին Ս. Թադէի վանքին մէջ երբ կ'ուսուցանէր Փրանկիսկեան Fr. Guillaume Saurati, Զաքարիա Ծորածորեցիի օրով, որ համակիր էր թէ՛ Փրանկիսկեաններու և թէ՛ Դոմինիկեաններու, թոմայականութեան ջատագով կանգնեցան և տիրացան Արտազու և Կարնոյ Փրանկիսկեան կայաններուն։ Հեղինակը կը յիշէ Յոբ Մանկուեցի Եպս. Ս. Թադէի՝ ԺԵ դարուն։

Ջանացինք համառօտիւ ցուցադրել յիշեալ երկասիրութեան այն կէտերը որ Հայ Միաբանող Եղբարց և ընդհանրապէս ԺԴ–ԺԶ դարերու կրօնական վէճերու պատմութեան հետ աղերս ունին։ Այս գործը մեծապէս շահեկան է եւրոպական նորագոյն աղբիւրներու մանրամասն գործածութեան համար որոնցմով հանգամանօրէն կը լուսաբանուին պատմական անցուդարձերը ժամանակագրական կարգով։ Սակայն պէտք է խոստովանինք թէ հեղինակը ազատ չէ միակողմանի պատմագրութեան արատէն. հասարակաց թերութիւն օտար բանասէրներու՝ որոնք կը հաւատարիմ է եւրոպական աղբիւրներու և Դոմինիկեան կարգին գիւանական աղբիւրներու քննութեան, այնքան անտեղեակ է հայ աղբիւրներուն. զարմանալի չէ ուրեմն երբ ըսենք որ երկասիրութիւնս Միաբանող Եղբարց գործունէութեան և պատմական դէպքերուն արժէքին գնահատումին մէջ հեռու է պատմական իրականութիւնը շօշափէլէ։

Կ'ընդունինք որ տակաւին ամբողջապէս չեն հրատարակուած հայկական այն աղբիւրները որ այս հարցերուն կը վերաբերին, սակայն ցարդ

ելած են բաւական ուսումնասիրութիւններ որ չափաւորապէս կը ցուցնեն Հայոց մէջ Միաբանողական շարժման բռնած ուղղութիւնը և գտած արձագանգը։ Հայ Եղբայրներու շարժումը, ընդունելով հանդերձ որոշ և մասնական օգուտները խոհեմագոյն հայ Միաբանողներու վաստակներէն, սակայն իր զանգուածային ամբողջութեան մէջ, ըլլայ ան հիմնադրին՝ Յովհաննէս Քոնեցիի կամ Մխիթար Ապարանեցիի կամ ընխրահռչակ Ներսէս Պաղտնի կամ Սիմէոն Պէկի կամ Զահկեցիներու, կարելի չէ ներկայացնել պարզապէս միութենական արգար շարժում արեւելեան եկեղեցիներուն՝ Հռոմայ հետ, և ընդդիմակ խումբին հակամարտութիւնը անխտիր իբր կաթողիկէ միութեան ընդդիմութիւն, առանց մեղանչելու պատմական ուղղադատութեան դէմ։

Հայ Միաբանողներու պատմագիրը այսօր պէտք չէ անտեսէ որ Միաբանական գործունէութիւնը Հայոց քով իր ակին մէջ իսկ արատաւորուեցաւ, ոչ միայն արմատական այն ուրացումին համար զոր պարտադրեցին անոր տկարամիտ գործիչները հայ ծէսին և կարգապահական մաքուր աւանդութեանց, այլ մանաւանդ այն ազանդաւորական մոլութեան համար՝ որով փորձեցին պարտադրել իրենց ազգակիցներուն՝ անոնց դարաւոր Քրիստոնէութեան ուրացումը՝ նոր ուղղափառ Քրիստոնէութիւն զգեցնելու պատրուակով, կրկնակնունքի, կրկնադրոշմի և կրկնաքահանայութեան մոլոր վարդապետութեամբ։

Զափազանց ընդվզեցուցիչ էին նման զեղծումները ամէնէն աւելի հանդարտ հոգիներն ալ զրգռելու համար, որոնցմէ երբեք չհալածուեցաւ Հռոմայ Ս. Աթոռին հետ աւելի մերձեցումի և Ներմացումի գաղափարը։ Մանաւանդ թէ հայ Հռոմայ Ս. Աթոռին հետ աւելի մերձեցումի և Ներմացումի գաղափարը։ Մանաւանդ թէ հայ ազգի մոլի Միաբանողներու աղետալի դերը այն եղաւ – շեշտելու ենք զայս ի սէր ճշմարտութեան – եղաւ – շեշտելու ենք զայս ի սէր ճշմարտութեան, կասորի ի չգոյէ հնարեց նախապաշարումներու, կասորի ի չգոյէ հնարեց նախապաշարումներու, կածի և անվստահութեան խոր վիհ մը Հայոց և Հռոմայ եկեղեցւոյն միջեւ. վիհ մը՝ զոր պիտի և Հռոմայ եկեղեցւոյն միջեւ. վիհ մը՝ զոր պիտի օգտագործէին յետոյ, աւա՜ղ, Հայոց և Հռոմի եկեղեցւոյն իսկական թշնամիները. մինչ Հռոմի եկեղեցւոյն իսկական թշնամիները. մինչ Հայաստանը մինչեւ այն ատեն մեծ սէր և յարգիշատակը մինչեւ այն ատեն մեծ սէր և յարգիշատակը գանք կը վայելէր թէ՛ Հայ Նուիրապետութեան մէջ և թէ մեր մատենագիրներուն։

Յարգելի հեղինակը որքան չէ աւարտած տակաւին իր շահեկան երկասիրութեան այս շարքը, կաւին իր շահեկան երկասիրութեան այս շարքը, կը համարինք թէ օգտակար ծառայութիւն մը կը համարինք թէ օգտակար ծառայութիւններով՝ կը մատուցանենք մեր այս դիտողութիւնները՝ կը մատուցանենք մեր այս դիտողութիւնները՝ թէ՛ պատմական ճշմարտութեան և թէ յարգելի թէ՛ պատմական ճշմարտութեան և թէ յարգելի հեղինակին՝ որուն ճշմարտասիրութեան մասէն տեղեակ ենք։ Ուստի լիուլի յաջողութիւն կը մաղթենք իրեն։

Հ. Կ. ԱՄԱՏՈՒՆԻ

*
* *

ՀԱՅՈՑ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ· — ԼԻԱԿԱՏԱՐ ՅՈՒՅՑԱԿ ՀԱՅ ԼՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՍԿԶԲԻՑ ՄԻՆՉԵՒ ՄԵՐ ՕՐԵՐԸ (1794 – 1934)· Առաջաբանով, Ներածութեամբ, Ծանօթութիւններով և Ադիւակներով կազմեց ԳԱՐԵԳԻՆ ԼԵՒՈՆԵԱՆ· Հրատարակութիւն Մելքոնեան Ֆոնդի, Երեւան, 1934, էջ Լէ + 228։

Մելքոնեան Հիմնարկութիւնը որուն գովելի ջանադրութեանը կը պարտինք յայտնի ուսուցչապետներ՝ Յ. Մանանդեանի, Հ. Աճառեանի, Մ. Աբեղեանի և այլոց այնքան արժէքաւոր գործերու հրատարակումը, նախանցեալ տարի պետրու հրատարակումը, նախանցեալ տարի պետրոտի տպարանէն լոյս ընծայեց Հայ լրագրութեան 140ամեակին նուիրուած Գ. Լեւոնեանի ներկայ երկասիրութիւնը, զոր վերջերս միայն պատեհութիւնն ունեցանք ձեռք բերելու։

Լրագրութիւնը մեր մէջ, իր գոյութեան ամբողջ ընթացքին, հանդիսացած ըլլալով մեր մտաւոր կեանքին հայելին, անոր ուսումնասիրութեանը նուիրուած ամէն գործ պէտք է նկատել նպաստ մը մեր գրականութեան պատմութեան։ Քիչ ազգերու մօտ թերեւս մամուլը խաղացած ըլլայ այն կարեւոր՝ նշանակալից դերը՝ ազգային, հասարակական այլ մանաւանդ մշակութային գետնի վրայ, քան ինչ որ վիճակուեր է իրեն մեր մէջ։ Կը բաւէ ի մտի ունենալ այն իրողութիւնը որ մեր իմացական լաւագոյն արտայայտութիւններէն շատեր մամլոյ սիւնակներուն մէջ երեւցած են նախապէս, յաճախ ոչ իսկ մասնաւոր հրատարակութեան մը բախտին արժանանալու։ Պատմագիրը որ պիտի ուզէ խօսիլ վաղը մեր գրական կեանքի մասին, պիտի չկրնայ զանց առնել այն դերը զոր Հայ լրագրութիւնը խաղացեր է մեր մէջ և վեր չանուել այն արժէքները որոնք հոն առաջին անգամ ի յայտ եկան։

Գ. Լեւոնեանի ներկայ գործը՝ իբր կարեւոր սարար մը նման ո և է աշխատասիրութեան, արժանի է լուրջ նկատման ու գնահատանքի։

Անծանօթ մը չէ Գարեգին Լեւոնեան մեր գրականութեան, մասնաւորաբար լրագրութեան պատմութեան մէջ։ Բաց ի Հայ Աշուղներու ուսումնասիրութեան նուիրուած իր կարգ մը հրատարակութիւններէն (որոնցմէ կ'արժէ յիշել՝ «Հայ Աշուղներ», Ալէքսանդրապոլ, 1892, «Ա-

digitised by A.R.A.R.@